

Է. Ա. ՍԱԼԱԽՅԱՆ

ԽՈՇՈՐԱԾԱՂԻԿ ՔՐԻՋԱՆԹԵՄՆԵՐԻ ՄՇԱԿՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐԻ ՄԱՍԻՆ

Քրիզանթեմները բաղամայա բույսեր են, որոնք պատկանում են բար-
դածաղկավորների ընտանիքին:

Ժամանակակից ծաղկեգործության մեջ քրիզանթեմները շատ լայն
տարածում ունեն, հայտնի են հարյուրավոր սորտեր, բաղամայիսի գույ-
ների, ձևերի ու խոշորության:

Աշնան և վաղ ձմռան սեզոնի համար քրիզանթեմները անփոխարինելի
ծաղկող բույսեր են: Նրանք ծաղկում են այնպիսի ժամանակ, երբ մյուս
ծաղկային բույսերը համարյա վերջացնում են իրենց ծաղկումը:

Որպես կտրած ծաղիկ նրանք ջրում երկար են մնում: Քրիզանթեմ-
ները օգտագործվում են թե՛ որպես ծաղկամանային կուլտուրա և թե՛ աշ-
նան ամիսներին ծաղկանոցները ձևավորելու համար:

Երևանի ծաղկեգործական տնտեսություններում հիմնականում տա-
րածված են քրիզանթեմի մանրածաղիկ տեսակները, որոնց մշակու-
թյունը համեմատաբար ավելի հեշտ է: Մինչդեռ պետք է ասել, որ գոյու-
թյուն ունեցող խոշորածաղիկ սորտերը շատ ավելի մեծ արժեք են ներկա-
յացնում և նրանց լայնորեն ներմուծումը մեր քաղաքում ծաղկեբուծու-
թյան առաջնահերթ խնդիրներից մեկը պետք է համարել:

Խոշորածաղիկ քրիզանթեմների այդպիսի փոքր տարածումը հալանա-
բար պետք է բացատրել նրանով, որ այդ սորտերը մշակության նկատ-
մամբ շատ ավելի պահանջկոտ են, քան մանրածաղիկները (այսպես կոչված
«դուբկաներ») և սովորական գրունտային մշակման դեպքում նրանք հա-
ճախ նորմալ ծաղկման չեն հասնում և ցրտահարվում են: Այդ պատճառով
էլ նրանց ստիպված են լինում ամբողջ ամառվա ընթացքում մշակել ծաղ-
կամաններում, որպիսի հանգամանքը դժվարացնում է նրանց մեծ տարա-
ծումը և ավելացնում է նրանց վրա կատարվող ծախսերը:

Ենելով վերոհիշյալից, մենք 1948 թ. որոշեցինք փորձնական եղանա-
կով պարզել մեր պայմաններում խոշորածաղիկ քրիզանթեմի մշակմանը
վերաբերվող հետևյալ հարցերը՝

1. Քրիզանթեմների կտրոնավորման լավագույն ժամկետը:
2. Ի՞նչ պայմաններում է նպատակահարմար կատարել նրանց աճե-
ցումը—ծաղկամաններում, թե՛ գրունտում:
3. Ե՞րբ և ի՞նչ բարձրություն վրա պետք է կատարել ծերատումը:
4. Յուրաքանչյուր բույսի վրա քանի՞ ծաղիկ պետք է թողնել և ո՞ր
ծաղիկները:

5. Պարարտացման նպատակահարմարությունը և նրա ազդեցությունը
քրիզանթեմի աճման ու ծաղիկների խոշորության վրա:

Փորձերը կատարվել են Բուսաբանական Այգու ծաղկաբուծության

բաժնում 1948—49 թթ. ընթացքում: Փորձի համար վերցվել են հետևյալ սորտերը՝

1. «Ոսկյա անձրև».—Վաղահաս, միջին խոշորության, ոսկեղեղնավուն ծաղիկներով:

2. «Մոնակո».—Միջահաս, մաքուր սպիտակ, գնդաձև. խոշոր ծաղիկներով, պսակաթերթերը դանգուր, ոլորված դեպի ներս:

3. № 91.—Ուշահաս, խոշոր բաց վարդագույն ծաղիկներով, երկար դանգուր, դեպի ներս ոլորված պսակաթերթերով:

Աշխատանքի մեթոդիկան հետևյալն է:

Կտրոններ պատրաստելու համար աշնանից յուրաքանչյուր սորտից համապատասխան քանակությամբ մայր բույսեր տեղափոխվել են ջերմատուն և պահվել այնտեղ:

Կտրոնները պատրաստվել են երեք ժամկետում—հունվարի 30-ին, փետրվարի 15-ին և մարտի 15-ին:

Կտրոնները վերցվել են արմատից դուրս եկող ընձյուղներից 3,5—5 սմ երկարությամբ, որոնց վրա եղել են 4—6 աչք: Յուրաքանչյուր կտրոնի վրա թողնվել է 1—3 տերև:

Արմատակալումը կատարվել է ավաղի մեջ, խոր արկղներում, որոնք վերևից ծածկվել են ապակով, արկղի մեջ խոնավ մթնոլորտ ստեղծելու նպատակով:

Մինչև արմատակալելը կտրոնների վրա օրական երկու անգամ մաքուր ջուր է սրկվել, որպեսզի տերևները չթառամեն:

Բոլոր ժամկետներում վերցրած կտրոններն էլ 19—20 օրվա ընթացքում 100%/օ-ով արմատակալել են: Զերմությունը եղել է 10—17°C. Երբ կտրոնների արմատների երկարությունը հասել է 1—2 սմ, նրանց զգուշությամբ հանել ենք արկղներից և տնկել 10 սմ տրամագիծ ունեցող ծաղկամաններում:

Որպես հողային լառնուրդ վերցրել ենք՝ 4 մաս պարտեզի հող, 4 մաս փոած գոմաղբ և 1 մաս գետի խոշորահատիկ ավազ:

Մինչև ծաղկման սկիզբը բույսերը ևս 2 անգամ տեղափոխվել են տարբեր չափերի ծաղկամանների մեջ. սկզբում 17 սմ տրամագծով և ապա 23 սմ:

Սկզբի երկու տնկումը կատարվել է փուխր դրությամբ, իսկ վերջին տնկման ժամանակ ծաղկամանի հողը ամրացվել է: Յուրաքանչյուր տեղափոխումից հետո բույսերը տվյալ ծաղկամանում մնացել են մոտ երկու ամիս:

Խոշորածաղիկ բույսեր ստանալու համար նրանց ծերատել ենք 1948 թ. 18 սմ բարձրությամբ վրա, իսկ 1949 թ. 12 սմ վրա:

Բույսի վրա թողնվելիք ծաղիկների քանակը պարզելու նպատակով փորձերը զրել ենք հետևյալ 6 վարիանտով՝

I Վարիանտ.—Բույսի վրա աճեցրել ենք մեկ կենտրոնական զգարնանային՝ կոկոն, հեռացնելով կողքային մնացած կոկոնները:

II Վարիանտ.—Բույսի վրա աճեցրել ենք առաջին կտրոնային մեկ ծաղիկ, հեռացնելով մյուս կոկոնները:

III Վարիանտ.—Բույսի վրա աճեցրել ենք առաջին կտրոնային երկու ծաղիկ, հեռացնելով մյուս կոկոնները:

IV Վարիանտ. — Բույսի վրա աճեցրել ենք առաջին կտրոնային երեք ծաղիկ, հեռացնելով մյուս կողմնները:

V Վարիանտ. — Բույսի վրա աճեցրել ենք մեկ ծաղիկ երկրորդ կտրոնում, հեռացնելով մյուս կողմնները:

VI Վարիանտ. — Բույսի վրա աճեցրել ենք երկու ծաղիկ երկրորդ կտրոնում, հեռացնելով մյուս կողմնները:

Ամեն մի վարիանտում յուրաքանչյուր սորտից ունեցել ենք 20 ծաղկաման:

Հունիսի 26-ին բոլոր բույսերը տեղափոխվել են գրունտ, ըստ որում բոլոր վարիանտներից առաստաղան բույս ծաղկամանով հանդերձ թողնվել է հողի մեջ (ծաղկամանի մեջ, ամառվա ընթացքում խոնավությունը ավելի լավ պահելու նպատակով): Իսկ մյուս առաջ բույսը հանվել է ծաղկամանից և տնկվել գրունտում:

«Մոնակո» սորտի վրա դրվել են նաև պարարտացման փորձեր հետևյալ կարգով.

Ամբողջ վեգետացիայի ընթացքում (գրունտ տնկվելուց հետո) բույսերը 10 օրը մեկ պարարտացվել են հանքային և օրգանական պարարտանյութերով:

Որպես հանքային պարարտանյութ վերցված է եղել՝ ամոնիում սուլֆատ, սուպերֆոսֆատ և կալիում քլոր, իսկ որպես օրգանական պարարտանյութ՝ գոմաղբի կիսահեղուկ (ժիժա), որի հետ խառնվել է սուպերֆոսֆատ:

Հանքային պարարտանյութերը արվել են լուծույթի ձևով 0,1% խառնվածք: Պարարտացումը կատարվել է հետևյալ կոմբինացիաներով՝ կոնտրոլ, ազոտ, ազոտ+ֆոսֆոր, ազոտ+ֆոսֆոր+կալիում, գոմաղբի հեղուկ+սուպերֆոսֆատ 10 օրը մեկ և գոմաղբի հեղուկ+սուպերֆոսֆատ ամիսը մեկ անգամ:

Սևպտեմբերի 5-ին գրունտում տնկված բույսերը վերատնկվել են ծաղկամանների մեջ ու դրվել ջերմոցներում, իսկ հոկտեմբերի 8-ին բոլոր բույսերը տեղափոխվել են ջերմատուն:

Ամբողջ վեգետացիայի ընթացքում, 10 օրը մեկ ըստ բույսերի նկատմամբ կատարվել են մանրամասն ֆենոլոգիական դիտողություններ, բացի այդ նկարագրվել են բոլոր վարիանտներում բույսերի ընդհանուր տեսքը և չափույթներ են կատարվել բույսերի բարձրություն, տրամագծի, ծաղկի մեծություն և այլնի նկատմամբ:

Ստորև բերում ենք մեր կատարած դիտողությունների ու չափումների արդյունքները, և նրանցից բխող եզրակացությունները տվյալ հարցերի վերաբերյալ:

Կտրոնավորման ժամկետների ազդեցությունը ծաղկման ժամանակի վրա:

Սորտի անունը	Մշակման եղանակը	Կտրոնավորման ժամկետները		
		30/I	15/II	15/III
«Մոնակո»	Գրունտ	20—25/X	18—20/X	14—21/X
	Մաղկաման	20—25/X	18—20/X	20—25/X

Քերված տվյալներից երևում է, որ կտրոնավորման ժամկետները ոչ մի ազդեցություն չեն թողնում բուսյան ծաղկման ժամկետի վրա, հետևաբար փոխանակ հունվարին կամ փետրվարին կտրոններ պատրաստելու և մեկ-երկու ամիս ավելի ջերմատունը զբաղեցնելու, մենք կարող ենք կտրոնները պատրաստել մարտին:

Կտրոնները կարելի է վաղ ժամկետում պատրաստել ու արմատակալեցնել միայն այն դեպքերում, երբ մայր բույսերը քիչ են և կարիք կա մեծ քանակությամբ քրիզանթեմ ունենալ, որովհետև կտրոնները վաղ ժամկետում վերցնելու դեպքում այդ մայր բույսերը կարող են նորից կտրոններ տալ և մարտին երկրորդ անգամ նրանցից կտրոններ կվերցնենք:

Մեկ բույսի վրա եղած ծաղիկները քանակի ազդեցությունը նրանց
մեծության վրա:

(Թվերը ցույց են տալիս ծաղիկ տրամագիծը սանտիմետրներով):

Սորտի անունը	«Գարնանալին» կոկոն		առաջին կտրոնավորմանից մեկ ծաղիկ		առաջին կտրոնավորման երկու ծաղիկ		առաջին կտրոնավորման երեք ծաղիկ		երկրորդ կտրոնավորման երկու ծաղիկ		երկրորդ կտրոնավորման երեք ծաղիկ	
	զբունտ	ծաղկամ.	զբունտ	ծաղկամ.	զբունտ	ծաղկամ.	զբունտ	ծաղկամ.	զբունտ	ծաղկամ.	զբունտ	ծաղկամ.
«Մոնակո»	17,0	16,0	11,0	15,0	17,5	16,5	15,2	13,4	16,5	15,5	14,7	14,8
«Ոսկյա անձրև»	—	—	—	—	10,0	10,6	9,0	12,3	—	—	—	—
№ 91	—	—	—	—	14,8	10,0	—	—	—	—	—	—

Խնչպես տեսնում ենք ամենից խոշոր ծաղիկներ ստացվում են այն դեպքում, երբ բույսի վրա աճեցնում ենք երկու ծաղիկ:

Մշակման տարբեր եղանակների ազդեցությունը բույսի բարձրության վրա
(սանտիմետրներով):

Սորտի անունը	«Գարնանալին» կոկոն		առաջին կտրոնավորմանից մեկ ծաղիկ		առաջին կտրոնավորման երկու ծաղիկ		առաջին կտրոնավորման երեք ծաղիկ		երկրորդ կտրոնավորման երկու ծաղիկ		երկրորդ կտրոնավորման երեք ծաղիկ	
	զբունտ	ծաղկաման	զբունտ	ծաղկաման	զբունտ	ծաղկաման	զբունտ	ծաղկաման	զբունտ	ծաղկաման	զբունտ	ծաղկաման
«Մոնակո»	61,0	53,0	69,0	57,0	65,7	55,2	67,1	60,6	80,0	57,0	67,0	56,0
«Ոսկյա անձրև»	—	—	—	—	44,0	31,0	42,0	56,0	—	—	—	—
№ 91	—	—	—	—	78,0	55,0	—	—	—	—	—	—

Այստեղից պարզ երևում է, որ բոլոր դեպքերում էլ զբուսեցնում արև-
կլմած բույսերն ավելի բարձր են, քան ծաղկամանում աճեցրածները, բա-
ցի այդ, զբուսեցնում բույսերը անհամեմատ ավելի փաթթած են լինում:

Պարարտանյութերի ազդեցությունը ծաղկի մեծության և բույսի
բարձրության վրա (սանտիմետրներով):

Վ ա ը ի ա ն տ ն ե ը	ծաղկի տրամա- զիծը	բույսի բարձրու- թյունը
սուռձիչ	13,5	57,0
ադոս	14,1	54,0
ադոս+ֆոսֆոր	13,3	55,0
ադոս+ֆոսֆոր+կալիում	13,4	50,0
գոմաղբի հեղուկ+սուպերֆոսֆատ ա- միսը մեկ անգամ	14,5	66,0
գոմաղբի հեղուկ+սուպերֆոսֆատ տա- սը օրը մեկ անգամ	14,2	58,0

Բերված տվյալները ցույց են տալիս, որ թե ծաղկի խոշորության և
թե բույսի բարձրության վրա ամենալավ ազդեցությունը թողնում է՝
ամիսը մեկ անգամ գոմաղբի հեղուկով (խառնած սուպերֆոսֆատի հետ)
պարարտացումը:

Կատարած փորձերի արդյունքներն ու մեր դիտողությունները մեզ
բերում են այն համոզման, որ Երևանի պայմաններում խոշորածաղիկ քրի-
զանթեմները կարելի է մեծ հաջողությամբ մշակել և պետք է որքան կա-
րելի է լայն չափով տարածել մեր ծաղկաբուծական տնտեսություններում:

Մինչև այժմ պրակտիկայում գոյություն ունեցող այն հղանակը, որ
խոշորածաղիկ քրիզանթեմները ամբողջ տարին աճեցվում էին ծաղկաման-
ների մեջ, սխալ է, քանի որ այդ դեպքում մեծ քանակությամբ բանվո-
րական ձեռքեր են ծախսվում, բույսերը շատ ավելի թանկ են նստում և
ծաղիկներն էլ ավելի մանր են լինում, այնպես որ ամռան սկզբին ան-
պայման պետք է բույսերը զբուսնոտ տեղափոխել և մինչև աշուն նրանց
աճեցնել զբուսնոտում:

Սակայն նկատի ունենալով, որ վաղ աշնանային ցրտահարություննե-
րը մեծ վնաս են հասցնում կոկոններին, կամ նոր բացված ծաղիկներին,
ապա անհրաժեշտ է նախքան ցրտահարությունները բույսերը գրունտից
ծաղկամանների մեջ տնկել (եթե ցանկանում ենք ծաղկամաններով բույ-
սեր ունենալ) և տեղափոխել ջերմատուն, կամ տնկել խոր ջերմոցներում
(կտրած ծաղիկ ստանալու համար):

Ոչ մի դեպքում չի կարելի տեղափոխումը դաշտից ուշացնել, հակա-
ռակ դեպքում վաղ աշնանային ցրտահարությունները վնասում են թե
բացված ծաղիկներին և թե կոկոններին, որոնք հետագայում բացվելով
բոլորովին աննորմալ տեսքի և ոչ գեղեցիկ ու ավելի մանր ծաղիկներ են տալիս:

Կտրոնավորումը պետք է կատարել փետրվարի վերջերին կամ մարտի
սկիզբներին:

Խոշորածաղիկ սորտերի («Մոնակո», № 91 և այդ տիպի այլ սորտերի)
ծերատումը նպատակահարմար է կատարել 12—15 սմ բարձրության վրա,
յուրաքանչյուր բույսի վրա պետք է թողնել 2 ծաղիկ, առաջին կտրոնի վրա,

ավելի ծաղիկներ թողնելու դեպքում ծաղիկները համեմատաբար մանր են ստացվում, սակայն միայն մեկ ծաղիկ թողնելը մենք աննպատակահարմար ենք համարում, որովհետև մեկ կամ երկու ծաղիկ աճեցնելու դեպքում, նրանք մեծութուններով իրարից համարյա չեն տարբերվում: Այն կարգի սորտերը, ինչպիսին «Ոսկյա անձրև»-ն է ավելի էֆեկտավոր են լինում, եթե բույսի վրան աճում է ոչ թե 1—2, այլ աննվազն 5—6 ծաղիկ, այդ պատճառով էլ նրա ծերատումը պետք է մի քիչ ավելի բարձր կատարել (15—20 սմ.):

Ամբողջ ամառվա ընթացքում, մեր նախատեսած քանակի կոկոններին բացի, բույսի վրա դուրս եկող բոլոր մյուս կոկոնները անմիջապես պետք է հեռացվեն:

Э. А. САЛАХЯН

О некоторых вопросах выращивания крупноцветных хризантем

Резюме

Целью работы было выяснить следующие вопросы выращивания крупноцветных хризантем в условиях Еревана: сроки черенкования, целесообразность грунтовой или горшечной культуры, высота прищипки, число цветов, выращиваемых на растении, некоторые вопросы удобрения и др.

Опыты были поставлены на трех сортах: „Золотой дождь“ (ранний), „Монако“ (средний) и № 91 (поздний). Опыты проведены в течение 1948 и 1949 годов.

В результате проведенных опытов автор приходит к следующим выводам:

1. В условиях Еревана культуру крупноцветных хризантем необходимо всемерно расширять, частично заменяя ими распространенные мелкоцветные сорта.

2. Выращивание надо вести до конца лета в грунте, в сентябре растения выкапывать с грунта, пересаживать в вазоны и, держа некоторое время в парнике, переносить в теплицы.

3. Срок черенкования почти не влияет на срок цветения и потому вместо января (как обычно у нас делают) можно черенкование проводить в конце февраля или даже начале марта, в связи с чем площадь под стеклом будет занята значительно меньшее время.

4. Прищипку крупноцветных сортов („Монако“ и также другие сорта этой группы) производить на высоте 12—15 см, а более мелких сортов (типа „Золотой дождь“) — на высоте 15—20 см.

5. Целесообразнее всего на растениях оставлять два цветка второй кроны („Монако“, № 91 и др.), на сортах же типа „Золотой дождь“ не менее 5—6 цветов.

6. Лучшие результаты получаются от удобрения навозной жижей, смешанной с суперфосфатом. Частота удобрения — раз в месяц.